

այսինքն այդ զանազան տեսակ հիմնարկում թիւնների վրա, կը համադրենք, թէ որքան հիւրանոցները իրանց գոյութեամբ նպաստում են մի քաղաքի հարստութեանը, յարմարութեանը և շքեղութեանը, այնքան միւկիտանները և վաքը պանդոփներից շատերը կարող են շատ անգամ ստորին դասի հարբեցողութեան, անդործութեան և անբարոյ սխիստութեան պատճառ լինել... Ինչ և ինչէ, միկիտանները և պանդոփաւորները, չը կարողանալով իրանց մէջ հարկը դասաւորելու գործի մէջ մի վերջնական վճիւն հասնել զանգատ տուեցին Գումային առաջինները խնդրելով պակասեցնել իրանց քաղաքային ակցիոն միջին չափը, երկրորդները խնդրելով, որ նրանց բաժանէին միկիտանների հարկատու հասարակութեանց և հարկի առանձին միջին չափը նրանց վրա դնէին... Խնդիրը սխիստացեալ ուղարկայի քննութեան, որ և ներկայացրեց իր զեկուցումը մայիսի 10-ի Գումայի նստի մէջ: Գուման երկար վիճաբանութիւններից յետոյ վճռում է բաժանել միկիտաններին պանդոփաւորներից, առաջինների վրա 75 րուբլու քաղաքային միջին ակցիոն չափը պակասեցնելով մինչև 25 րուբլ: Իսկ վերջիններին աւելցնելով այդ հարկը մինչև 100 րուբլ: Այդ վճռով լինէ հետևանքները որ հասնէ Գուման: Հետևանքը այն կը լինի որ մեր քաղաքի այնպէս էլ բազմաթիւ միկիտանները, հարկ թիթեանաւորուն պէս, աւելի էլ կը բազմանան, հետեացնելով ժողովուրդի հարբեցողութեան միջոցը, վաքը պանդոփներից շատերն էլ, տեսնելով մի կիտան և ոչ թէ պանդոփ անուանվելու շահը, կը փոխեն միայն իրանց նշանակը, դառնալով միկիտանների խառնութեն, — իսկ միւս կողմից պանդոփների և հիւրանոցների, մանաւանդ զոցանից առաջին կարգին պատկանողները դրութիւնը այնքան կը դժուարանայ, որ նրանք ստիպված կը լինեն կամ աւելի էլ թանկացնելու ամեն բան թէ ուտելիք, թէ սենսաֆեր, կամ ստիպված կը լինեն փակել իրանց հիմնարկութիւնը և այդպիսով քաղաքը կը զգիլի երեք չորս ճշմարիտ եւրոպական հիմնարկութիւնների յարմարութեանից: Ինչ ուղում են ասին, դա քաղաքի համար մեծ յարմարութիւն է և պէտք է խոստովանենք որ մենք տեղացիներն և ուսաներն անընդունակ ենք (զոնէ փորձ ցոյց է տալիս) այդ տեսակ հիմնարկութիւններ օտար քաղաքների, մանաւանդ Ֆրանսիացիների նման բարեկարգ դրութեան և մաքրութեան մէջ պահելու, նրանց նման յարմարութիւն և հոյնջորտ հիւրանոցի մէջ մոցնելու... Տեղացիները կայ կամ վրացիներ, կամ ուսուր երբ քաղէ անուամ այդ տեսակ հիմնարկութիւն, դա առաջին օրերը բարեկարգ է լինում, իսկ մէկ երկու քաղաքից յետոյ ամեն բան խնդրուողում է, շարքութիւն, ապակայնվում է, այնպէս որ մարդը զգում է այնտեղ մանիւր: Վերջը այդ տեսակ հիմնարկութիւնները բարոյական կողմից բնկնում են և իրանց տեղերը աւելի և աւելի ստիպելով կտակարար հիմնարկութիւնը, քանդուում են և հիմնարկութիւնները փակվում են: Միթէ արդար է մեծ հարկ վերցնել օտարականների այն տեսակ հիմնարկութիւններից, որ մենք ինքներն անընդունակ ենք հաստատել և պահել... Նրանցից վրացիները ծանր և նրանց համար անտանտի հարկ, միայն այն պատճառով որ ինքներն անբարեկամ են նրանց նման այդ տեսակ օգտաւէտ հիմնարկութիւնները կտակարարելու:

9. U.

ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ ՆԵՐԿԱՑ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԵՐԻ
ՄԷՋ

Իգգական սեռի, գործնական և ընկերական կրթութեան կարևորութիւն զգացող անձերից զըրթէ առաջինը եղաւ Բուսօ:

Մարդուս բնական դաստիարակները, — աւտում է այդ աշխարհածածօթ մատենադիրը — մայրերը ընկերը, մարդկային կեանքը նոցա նախախնամական ձեռքով կաճի և կը կազմուրկի. նոքա Համաշխարհական բարիչաւութեան սահմանեալ փրկելիները, անցեալի Հունձը, Ներկայի սիրտը և ապագայի առաքելայինքներն են:

Քաղաքակրթութեան առաջ մարդիկ ամենին սեռականութիւն չունեն: Յառաջադիմութեան զգացումը բնական և ընդհանուր է և արգասիքը հաւասարադրօ: Որինասոր քաղաքակրթութիւնը վերաբերում է երկու սեռին ևս:

Իգգական սեռի դաստիարակութեամբ ներկայի և ապագայի մէջ յառաջանալու օգուտները անուրանալի են: Կանանց դաստիարակութեամբ միայն կը հայածնին մի հաստատարական սեռի ևս:

բաղադրված է մեջլիս՝ այն ամեն նախապաշար-
մունքները, որոնք չինական պարիսպների նման
միշտ արգելք են հանդիսացած լուսավորու-
թեան յառաջդիմութեանը:

Մանկական փափուկ կենսերը, որ մկնչե
 իւր կատարելութիւնը ենթարկուած է իւր
 ազդեցուծմանը, նորանից պիտի ջաջի
 իւր ապագայ լրթնուկան պտուղները: Ման-
 կան կենաց վերայ տիրապետող բոլոր միտում
 ներք, իւր սկզբնական զատութեամբ հու, իւր
 մօրը, տարաքններն են:

Չգալով այդ ամենը, մենք ուշ դարձնենք այն երևույթի վրայ՝ ի՞նչ կը լինի արդեօք այն մանկան ապագան, որ իւր մանկութեան թարմ տարիները անցրել է մի այնպիսի մօր արդէն ցուած մեծանի տակ, որ եւնէթարկեա՞ծ լինելով խաւար նախապաշարուններն, մի եւ նոյն ոգին ներշնչացած է իւր մանկան մէջ. այնպիսի մանուկից ի՞նչ կարելի է յուսալ ապագա յու՛մ, քանի որ նորա գաղափարները սահմանափակեա՞ծ են այնպիսի անիրական սահմաններով, որոնք միշտ արդեօք պիտի հանադիսանան նորա գործունէութեան յաւաքաղիմութեանը:—Բայց մի եւ նոյն ժամանակ ի՞նչ բարիքներ չը յուսացվի այն մանուկի ապագայից որ դաստիարակվելով մի գործնաւէրան է բարոյական կրթութեամբ դաստիարակեա՞ծ մօրից, կը ծծէ նորանից կաթի հետ եւ այն ուղղութիւնը, որ մէ լայն ասպարեզ պիտի դառնայ նորա յաւաքաղիմութեան քայլերուն եւ վերջում պիտի հանդիպանէ նորան հասարակութեան օգտաւետ անդամներով մէկը:

Ապագայի քաղցր երևակայութեանց իրա-
գործումը մանկան համար, կախումն ունի
միայն մօր ստացած դաստիարակութենից:

Ներկայ ժամանակում իգական սեռի դաստիարակություն կարևորությունը մի հարց է դառած մեր հայերի մէջ: Եւրօպական լուսաւորեալ ազգերը ի վաղուց նկատած լինելով հւաստարազօր դաստիարակութենից յառաջացող օգուտները նմարկութեան երկու տարբերի, այն է՝ արական և իգական սեռի մէջ, ամենայն ջանք զործ են դրած և զործ են դնում, որքան կը ներէ կրթութեան լոյսը, այնքան յառաջացնելու նոցա լուսաւորեալ կանայն ապարիղի մը:

Բայց ի՞նչ են անում մեր հայերը:
Մեք ասացի՞նք որ նոքա ևս հետապրքըր-
վում են այդ հարցով: Այո, անտարբեր չեն
մեր լրագրողիժիները, նոքա գոչում են միշտ
լուսաւորութիւն, լուսաւորութիւն, կանայքը
պիտի որո՞վմ են այն:

Բայց հայ հասարակութիւնը, արդեօք հեռուում է այդ իրաւանքին,—ցաւօք ստիպիտի ասելը,—նչ, վաճառ զե մեր հայ հասարակութեան (ի հարկէ բացառութեամբ մի քանիսի), միտքերը այնքան պաշարված, այնքան սահմանափակված են նախապաշարումներով, որ երբեք մի առողջ գաղափար, մի գեղեցիկ դատողութիւն չէ կարողանում ներս մտնել նոցա ուղեղի մէջ.—եւ ահա այս է պատճառը, որ կրթութիւնը որքան խորթ այնքան էս զգուշիկ է թւում նոցա ականջներին: Կինը չունի նոցա մօտ այն պատիւը, այն իրաւունքը, որ մենք նկատում ենք ուրիշ առաւել լուսաւորեալ ազգերի մէջ, կինը, մի յետին ստրուկ, մի աղախին է նոցա համար, կարծես նա նախասահմանութենից նշանակված է միմիայն ստրուկ լինելու, միմիայն թէ կամայւմ է թէ ականջաւ հնազանդվելու մարդու կողմ հրամաններին:

Եւրօպացիներ պարծանք է համարում իր
կոտորած քաղաքներին իրա հետ ի միասին բռ-
նու իր կենսերի ուրախությունները և գլուսա-
լու թխվածքները և նոյնպէս ցաւերը բաժանել
տալ, բայց մեր հայերը ամօթ են համարում
իրանց կոտորած քաղաքներին մասնակցել տալ հա-
սարակութեան բոլոր բարոյական ուրախու-
թիւններին և բարոյական ցաւերին:

Այն Հին արևելեան աննախանձիկ սովորութիւնները, թուրքերից և պարսիկներից առած, այն է կանանց Հիւրերու առաջ չերևալ մինչև այսօր տիրապետում է մեր Հայերի մէջ, թէպէտ այդ սահական բարբառութեան սովորութիւնը մասամբ վերացած է Թիֆլիսի և Կովկասեան մի քանի քաղաքների հայ Հասարակութեանց միջոց, բայց միևնոյն ժամանակ շատ տեղեր, ինչպէս Համանալ, Ղարաբաղ և այլն, դեռ տիրապետում է այդ Հին բռնաւորութիւնը: Կանանց աշատութիւնը բոլորովն սահմանափակւած է այդ կողմերում, նորա ոչ միայն իրաւունք չունեն հիւրերին կամ տան սպասարդներին երևալու, այլ մինչև անգամ արգելւած է նորանց պատուհանից դուրս նայելն էլ: Եւ հակառակ դէպքում պակաս չէ նոցանից ծնծր և հայ-հայաձեր, — ահա այդ է իրանց մարդու գէշըրդէպի այդ տօր արարածները:

Յաւալի է երբեմն նկատել, այն քնքուշ
մատաղ կնոջ զրութիւնը, որ իբրեւ աներու

ա մե ն ա ծ ա ծ ու է խորհրու մէջ մենացեալ
պանունքանք, ամբողջ օրերով միայնակ փակ-
ված չորս պատերի մէջ, չէ համարձակվում
ղէպու գուրս նայել, մի փոքր Թարմ օդ ծը-
ծէպու....

Այժմ հարցնենք մեր հայերից: Ահլը որ իւր մարդու ուրախութեան և արտմութեան միակ ընկերն է, ի՛նչու պիտի այդքան անարգիլ նորանից, նա որ նախ կենանք և ապա զգացում շնորհեց մարդուն: Ի՛նչու չը պիտի մեր կանայքը ևս մասնակցէին ազգային և ընկերական գոաքածութիւնների. ի՛նչու պիտի հեռու պահենք նոցա պատուաւոր ընկերու-թիւններէից, որոնց զարդն են միմիայն կիները: Ի՛նչու մեզ ամօթ պիտի զգանք մեր ընտա-նիքը մեզ հետ մասնակցեւ տար կեանքի բոլոր երեւոյթներին:

Այս մի անարդարանալի նախապաշարումն է, այս կանայքը մարդ չը համարելու հետեանքն է:

Նախապաշարումը պատռելով՝ յանդգնու-
թիւն պէտք է:

Եթէ մեր կանանց ընդհանրապէս տղա-
մարդու նման մատչելի լինէր կրթութիւնը,
նախ նոքա կը պատուէին նախապաշարման
վարագործը. բայց զժբաղդաբար այլ վեճա-
կից զուրի են:

Նախապաշարումը պատռելու համար շատ ջորեղ ձեռքեր, ազդու գրիչներ և ազգի ապագայ բարօրութեան համար աշխատող ուսումնականներ պէտք են:

Բայց ուր են այդ ուսումնականները, արդեօք անցան թէ նոր պիտի գան:

Այն հասարակութիւնները որոնք զուրկ են իգական սեռի ազդեցութենից, զուրկ են նաև բնութեան ստեղծագործական, նուրբ զգացմունքներից:

Թեոդ կանայքը ազատվին իրանց ներկայ
դրութենից, ապրին լուսի, ազգականաց, բա-
րեկամաց և ընկերութեանց մէջ, դատարա-
րակվին մարդու հետ միահաւասար, — մի խօս-
քով ապրին հասարակութեան մէջ, և ոչ
թէ հասարակութենից դուրս, — այն ժաման-
ակ կը տեսնէք ինչքան վստմ մտածու-
թիւններ, ինչքան երեւել գրիչներ, նշանա-
ւոր ընդունարկութիւններ, որք անյայտ չբա-
ցած են մինչև այժմ, գրկված լինելով ծառա-
յութիւններ մատուցանելու թէ ազգին և
թէ ընդհանուր մարդկութեան, — յանկարծ
կը յայտնվին, կը յարուցվին, կը ստեղծվին:

Այժմ ինչ օգուտ ունեն ուսումնարանները, օրինակ Շամախու նման մի քաղաքում ուր օրիորդը մի կամ երկու տարի ուսանելուց, յետոյ, կրկին ենթարկվում է այն նախնական դրոբմէր կենսաճին, որի մէջ ապրելիս են եղել նորա մայրեր....

Այս մասին մեր կարծիքով նախ պիտի վերանայ կանանց վերադից մարդու այն ապօրինի իշխանությունը, որով ճշմարիտ են եղել մյնև այժմ կանայք, վերանայ նոցանից ամեն լճառուութեանց գլխաւորադոյրը՝ ծնծը եւ հայհոյանքը, շնորհիւ նոցա տղամարդոց հաւասար ազատութիւն, այն ժամանակ միայն մեզանում հիմնով օրիորդական դպրոցները կը հասնեն իրանց նպատակին, այն ժամանակ միայն մեր իգական սեռին արժող դաստիարակութիւնը եւ կրթութիւնը արդիւնաւոր կը լինի:

Ա. Ա. Զախարանց

5.11.1911 թ. ԲԱՅՈՒԿ

000 041-6111-9

11-11-11

Ապրիլ 30-ին

«Մշակի» № 13 Բ ա դ ու լ ի ճ գրած վաճառական դասի վերաբերությունները լուրջ շատերին զարմացրեց։ Պարոն լուր հաղորդողը երեկ մի մասնատու երեկոյթ ընդհանուրին է վերաբերել։ Ինչի մոռանում է պարոնը Բագուի մէջ վաճառական դասի ամեն մի քաղաքործական նպատակի համար արած գործերը, Թոքոնից չէին բերել, դեռ յիշեցնենք թղթակցին նոր փաստերը։ Արդեօք այն տասն անձանց լից ինն վաճառական դասից չէին, որոնց 1875 թ. դեկտեմբեր ամսում տեղիս Մարդասիրական լուսկերությունն Խորհրդի անդամները դիմացին, առաջարկելով նրանց ընդունեն ընկերությունն ան փոփոխ անդամությունն պաշտոնը, որի համար անհրաժեշտը պէ տքն է վճարէ 100 ռուբլ։ Արդեօք չը դիտէ թղթակցը որ այն տաս անձինքները սիրով և յօժարությունով ընդունեցին այդ առաջարկությունը ինն հոգի և միայն մինը չընդունեց որ վաճառական էլէր։ Միթէ թղթակցը չը դիտէ թէ Մարդասիրական լուսկերությունն անդամները որք Բագու քաղաքումն են, մեծ մասամբ վաճառականներն են, միթէ չէ կարողանա ամեն տարվա ընթացքում Վարեգործական լուսկերությունն տպված ընդարձակ հայելը, որի անդամների մեծ մասը յոյն

պէս վաճառական մարդիկ են, որք երբեք չեն խնայել իրանց կարողութեան չափ գումարները արտադրել ընկերութեան մատուցածու Բազուկի մօր վաճառականն է մերժել ամեն մի աղօղոտու նպատակի համար կարողութեան չափ օգնելու... Եր վաճառականը մերժել է եկեղեցու, ուսումնարանի համար նուիրատուութիւն անելու, կամ թէ Բազուկի բնակիչներին, թէ Ռուսաստանի այլ տեղերը, օրինակ Շամախայը, թէ Պարսկաստանից և թիւրք- լիայից եկած հայ աղաքաներին օգնելու... Թող թղթակիցը նայէ զանազան նոր հայերէն գրքերի և լրագրիւնների Բազուկի բաժանորդների ցուցակ- ները,— և կը տեսնէ որ բաժանորդներից մեծ մասը վաճառականներն են։ Այդ տեսակ լուրի հաղորդ- ւածք անտեղի է, որովհետեւ չէ կարելի ընդհանու- լին վերաբերել մի մասնաւոր երեւոթի։

Վ. ԿՆՆԱՆԻՆԵՐԻՅ ԴԵՐ

ՆԱԽԱԿ ԼՕՌՈՒՑ

Այդհնամ, մայիսի 10

Բաւական ժամանակ էր որ Լօռու կողմերն անհետացել էին աւազակները և ժողովուրդն անեկիւղ, համարձակ ճանապարհորդութիւն էր անում, ուր որ կամենում էր,—բայց դժբաղդաբար կրկին երևեցան այն ժամանակաւորապէս անհետացած աւազակները, կրկին տրեղ թէ Լօռու դատաւում, թէ չըվալայ տեղերում երկվայ Սօս օրերս կէս օրին Սլամա թ և Քոռ ի վայնէր և աւազակապստները 18 մարդով անցնում են Ղազան գաւազաւով Հայու գիւղով: Գոցա տեսնում են պրիտավի պահապանները և մինչև որ պահապանները մընը գնում է որ իրանց զիլաւորին այդ մասին յայտնէ, աւազակները բռնում են 6 պահապաններին, կապում են նրանց ձեռքն ու ոտքը և իրանը հեռանում են: Տեսնում էք ուրեմն որքան թոյլ է պրիտավի կառավարութիւնը, որ աւազակները կնն օրին համարձակ չըլնում են պիւղբերում, Իշխանութեան ուշադրութիւնը հրաւիրում ենք այդ տխուր երեւոյթի վրա:

ቡ. ቅ.

ՆԱԽԱԿ ԴԵՐԲԵՆԴԻՑ

Այս օրի 25-ին

Դերբենդի հասարակութեան ինչ դրութեան մէջ լինելը տ որ ո՞րն անկման օրից, ձեզ, նմանապէս, ընթիկցողներին յայտնի է, վրամն որոյ աւելորդ է խօսել սորա վերա, ըսնի որ աղքատութեան է ստատապանաց չը կայ չափ ու ստատանն: Բողոքներն ստորոնի հարցը եւ խօսնելը ուրիշ գործերի վերա:

Մեր երկրասարգները արդեն զգացել են ազգային թաաործի կարեորութիւնը, վասն որոյ նոքը նուիրել են իւրեանց ամէն ջանքը, որ յառաջ տանն թաաորներ, չը հալելով ամէն տեսակ աղիքըներին: Այսպէս նոքա 1875 թիւ դեկտեմբերին մինչև մեծ պարո ներկայացրին յետագայ պիտանները՝ «Վլատո», «Թուղթ խաղաղութի կեանք», «Արչակ II», «Հշտանիկ» և մի քանի զօղովիւններ: Որչափ երկրասարգները հետեւում էին այդ գործին, նոյնչափ և մեր տիկիւնները և օրիորդները, որոնք անուանները արդէն քանիցս անգամ հրատարակված են ձեր լրագրի մէջ, իրանջ նորհայի խաղով հոգի էին տալիս բեմին: Ամէն ներկայացում հատարութիւնը պիցելել է, չը նայելով իւր դրութեանը: Յօռնաք որ յիշեալ երկրասարգները, տիկիւնները և օրիորդները կարողանակին իւրեանց յանձն առած գտաւէտ գործը:

Այդդեղործությունը, տորոնից յետոյ առաջինն աղբիւրն է տեղւոյս հայերի համար, — դժբաղդաբար նա էլ ունի իր անյարմարութիւններ և դժուարութիւններ. Կերբեհղեցիք արդէն փորձած են քաջ հաւատացած են, որ այդիւների մասին իւրեանց ձեռքով հողալի հողալը ունէ իւր օգուտները, այս պատճառով նորա էլ լիզղիներ ինասնաստարութիւններքոյ չեն թողնում, այլ իրանք են հողում իրանց այգիների մասին, հետեաբար և ստանում են շատ լաւ, խտակ, մաքուր զինիսի՝ կարմիր և սպիտակ և նոյնպէս օդի 470/0 միջկի 700/0 աստիճան և ծախում են տեղի վրայ զինիւնքը վերինն 80 կոպէկից մինչև 2 ռուբլ, իսկ արաղի աստիճանը և կոպէկից մինչև 9 կոպէկ. Բայց Կերբեհղեցիք շատ անհոգ են, չեն վաճառահանում իրանց բնական բերքը այլ քաղաքները, որպէս Ղշարեցիք կամ Մաղղասեցիք, չեն կազմում ընկերութիւններ, ու մի տեսակ ճանապարհ բաց անեն իւրեանց իւր միջքները ծախելու համար. Թէպէտ մի քանի տոննա մտարած են Ատորախան կամ Նիփոնայի տնայաճառուր, — այն էլ չատ են գնեցի, հաւաքելով զանազան տեսակները խառնած միմեանց

զնային Թիֆլիսի և Կոնստանդնուպոլսի և այնտեղ իրանց ընտրել տուեցին պատգամաւոր Բաջայի անկանոն է, որովհետեւ կուսանաց վանքը թէ և քահանայ ունի, որ կարող է իր ծախսն էլ ունենալ, բայց ինքն եկեղեցին՝ ծխական եկեղեցի չէ, այլ անապատ է և ունի սեփական ժողովուրդ չունի, այլ նրա ժողովուրդը միացած է Մոսկուի եկեղեցու ժողովրդի հետ: Եթէ ժողովուրդը չը կայ, ուրիշն պատգամաւորներն էլ ընտրուիլ չեն կարող, որովհետեւ ժողովուրդը միացած է Մոսկուի եկեղեցու ժողովրդի հետ: Եթէ ժողովուրդը չը կայ, ուրիշն պատգամաւորներն էլ ընտրուիլ չեն կարող, որովհետեւ ժողովուրդը միացած է Մոսկուի եկեղեցու ժողովրդի հետ: Եթէ ժողովուրդը չը կայ, ուրիշն պատգամաւորներն էլ ընտրուիլ չեն կարող, որովհետեւ ժողովուրդը միացած է Մոսկուի եկեղեցու ժողովրդի հետ:


Հրկանում ընտրվել կարող են և այլ չրկաններ ինքնապաշտօնները: Քաղաքային ինքնապաշտօններն մէջ ընտրուելու են ինքուստ երեք չրկաններ, որոնցից իւրաքանչիւրն մէջ ընտրել կարող են միայն իրան չրկանին պատկանողները, իսկ ընտրվել կարող են նաեւ չրկանում և այլ չրկանի ներկայացուցիչները: Մեր եկեղեցական ընտրութիւնների մէջ, ցէնցըր միայն այն է որ մենք հայ-ուսաւորական դաւանութեան ենք պատկանում և ուրեմն պատկանում ենք այս կամ այն եկեղեցու ժողովրդին, ուրեմն քուէարկել կարող է ամեն մարդ միայն մի տեղ, իսկ ընտրվել նա կարող է միայն անգամ դաւանաւոր տեղիւր, ի հարկէ մէկ տեղ պահելով որպէս պատգամաւոր:

Մեկ գրում են Կ. Պօլսկի «Մշակ» ընթացիկ տեսնելով, հայաստանի անկախութիւնը և որ անտարբեր մնան դէպի նրա պաշտպանութիւնը: Եւրոպայի համարը այս կողմերը ինքնապէս ամեն տեղ, ուր փոքր ի շատէ ընթերցասիրութիւն կայ, սկսած է տարածուիլ: Թէ «Մշակը» կարողաւոր թէ Ռուսաստանի մէջ հրատարակւած գրքերը շատ անգամ աչքի տակ անցնելով, Թիւրքիայի հայր համարվում է որ Ռուսաստանում սուղագրական խօսքը անհամեմատ աւելի մեծ ազատութիւն է վայելում, քան թէ Թիւրքիայում, ուր միշտ այժմ սխալ կերպով կը կարծւիլ, աւելի ազատութիւն լինել: Եթէ միշտ անգամ լինէր Թիւրքիայում ընտրվող հայի համար ազատագրական ազատութիւն, այստեղ ընտրվելուին այն աստիճան յայտնի ներթափան ինքնապաշտօնական, չքաւորութեան, աղքատութեան մէջ է ընկած, որ բարոյագիտ և մտաւորապէս բարձրանալու ձգտողութիւնը հաղիւ երեք կարող է հայի մարմն անցնել: Այս պէտքով ընտրվող գրութեանը հասած ենք այժմ Թիւրքիայի մէջ:

Վերջին հետադրերը հայրդրում են որ Կ. Պօլսկի մահմադական ամբողջ կառավարի մարտնչութիւնը այն աստիճան է հասել, որ Սուլթանին սպառնում է դաժնիք ընկնելու:



Հայաստանի անկախութեան հրկան անի իրանց գեղեցիկ մարդկայ պարտական են միայն արտասահմանում վաճառվող այնպէս անուանված ՌՈՒՍԱԿԱՆ ԽԻՆՕՂԻՒՅՏԵՐԻՆԻ ՊՕՄԱԿԱՅԻՆ, որ մաղիւրը բուսնի է տալիս: Այդ պոմաղը բժշկական շատ հեղինակութիւններ իր զօրքով փորձված է և ունի վնասական թերթիւր: Այլ կերպով ասելով, որ վնասակար լաւագործութիւնը արտաքին արտաքին է և նոյնպէս Մոսկուի բժշկական վարչութեան թղթատրութիւն: Նա ունի մի ծաղուկութիւն և վերջին ժամանակ հետադարձ էր Մոսկուի բժշկական վարչութեանը որ ասեց նրան իր հաւանութիւնը: Կանոնաւոր գործածութեան ժամանակ, միշտ անգամ մաղիւրը մերկ գրութիւնը ծածկվում են մաղիւրով: Այդ պոմաղը պիտոյնում է կաշին, արտադրում է մաղիւր թափելուց, մաղիւրն ամալիս է քանկան տեղը և փայտաւորութիւն և իր անուանաւորութեան պատճառով, որ նրա լաւ յատկութիւններից միշտ է, կարող է գորդարել ամենաչքի տալիս տեղիւր: Այդ բոլոր յատկութիւնները իմ արդիւնքի, իրաւունք են տալիս ինձ յայտարարելու Ռուսաստանում էլ նրա ընդարձակ տարածման և պատկերի հատարակութեանը լաւ ընդունելութեանը:



ԳԻՆԸ ՄԻ ՇԵՇԻ ՀԱՄԱՐ 2 ԲՈՒՐԼ

Իւրաքանչիւր շիշի հետ արվում է և պոմաղի գործածութեան նկարագրութիւնը:

Պ Օ Մ Ա Կ

PASTA EUGENIE



ՄԻ ՍՐՈՒԱԿԻ ԳԻՆԸ 1 Բ. 60 Կ.

Որի հետ արվում է և նրա գործածութեան նկարագրութիւնը:

Իւրաքանչիւր սրտակի վրա ինչպէս մաղիւրի համար, այնպէս «Pasta» գտնվում է մի աստիճանի գրով: Սուլթանի պատկերով և հնարողի ստորագրութեամբ, որի վրա աստիճանի ինքնութիւնը:

ՉԵՌԳԵՐԻ

Այդ պոմաղը այնպէս է պատրաստվում, որ նրա գործածութեանը յետոյ ձեռքերը ստանում են զարմա-

Սրտակի գինը 1 Բ. 30 Կոպ.

ՄԱԶԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԸ, թէ մեզ իտալական, թէ սե, որ ներկում է 10 րոպէի միջոցում և չէ կորցնում իր տեղութիւնը 6 շաբաթվա ընթացքում: Արդիւր 3 րոպէ: ՏՕԿԱՅԱՆ ԻԱԼԶԱՄ, հաստատ միջոց կոշտերի և կաշու կոշտութիւնների դէմ: Սրտակը 60 Կ. 17 (50)

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Ի Ն Ն Ե Ր

ՀԱՇՅԻ

Համախոյ երկուս զարդաց Մատենադարանի յընթաց 1875 թ.

Առ 1-ըն յունվարի 1875 թ. մնացել էր գուտ գումար 348 Կ. 54 Կ., նոյն թուականում եղել է մուրը 355 Կ. 7 Կ. ընդ ամենն է 703 Կ. 61 Կ. 1875 թ. եղել են ծախք 200 Կ. 62 Կ., որից 199 Կ. 70 Կ. հայրենի, ուսանելի գրիւնները օրադրների և լրագրիների համար: Իսկ 10 Կ. 92 Կ. մասնադարանի վերաբերեալ մանր ծախսը մասին, ուրեմն առ 1 յունվարի 1876 թ. մնում է առ ձեռն դրամ 502 Կ. 99 Կոպ.:

Առ 1-ըն յունվարի 1875 թ. Մատենադարանը ունէր 437 հեղինակութիւնը թուով 814 հատ գրեանքներ, արժողութեամբ 867 Կ. 8 Կ. Բընթաց նոյն ամի ձեռք են բերված թէ դրամը և թէ ընծայմամբ 132 հեղինակութիւնը 242 հատ գրեանքներ — ընդ ամենն 569 հեղ. թուով 1056 հատ գրեանքներ, արժողութեամբ 1148 Կ. 3 Կ., ուրեմն Մատենադարանի ներթափան չրկանի գումարն է 1651 Կ. 2 Կ.:

Բընթաց 1875 թ. վեր են առնում ընթերցանութեան համար 777 անգամ գրեանքներ, առ հաշուով Համախոյ հայ բնակչաց 3606 հոգւոյ վերաբերվում է համարեալ 5 հոգւոյ մի գիր:

Մեր սեպուս պարտաւորութիւն ենք համարում, իբրեւ բերան գրադարանին օժանդակիչ անդամաց, հրատարակական խորին յարգանքը հրատարակութիւն մատուցանել Բազում եկեղեցիաց գործակատար Թաթևոս աւագ քահանային, իւր ջերմ և արդիւնաւոր համակրութեան համար դէպի մասնադարանը, որը ամեն մի դէպքերում չէ իրենայի իւր բարոյական և նիւթական օժանդակութիւնը գրադարանի յատաճարկութեան և բարձրաւորութեան համար: Ինչպէս և ամենայն ազգային գործերում, կեցնեն այսպիսի հոգիւրանք ի պարճան Սղիսի և Եկեղեցու:

Գործակատարը զրապ: Առ Ս. Աղէքսանդրեան: Մատենադարանի զանապա: Գիրք կանխանակ: Աղ. Վարդանան: Մարտիրոս Թումանյան:

Պատրաստի ունենը «Մարտի 1-ըն» երրորդ տարին — ընթերցանութեան զանապարհը աղջկան ուսումնարանների համար, որը բարձրացած է ասան և մէկ վարժութիւններից, որոնցից առաջինը խոսում է մարդկային:

Թեան, կապիւնների և տարուայ չորս եզանակների մասին: 2) կաթնառուն կեղանքներ: 3) Թուշուններ, սորուններ, ձիւնը և ստորակարգ կեղանքներ: 4) բուսարանական և հանքաբանական 5) ֆիզիկական երեւոյթներ: 6 և 7. աշխարհագրական (քարաբանական և մասնաշխարհական. աշխարհ. տեղեկութիւնը հին Հայաստանի մասին): 8, 9, 10, պատմական (Հայկազանց, Արշակունեանց հարստութեանց հիւղերորդ դարու հայերի և վերջին հարստութեանց հակիրճ նկարագրեր): 11. գրաբար յօդուածներ: Բայց այս հիմնական կետերից վարժութիւնների հետ խառն գրուած են նաեւ ոչ սակաւ թէ արձակ և թէ չափաբերական յօդուածներ: Գիրքը կը բաղկանայ 15—16 տպ. թերթերից, թերթը 32 երեսից բաղկացած, Մայր. լեզ. չորրորդ արաբագրութեան դիրքով: Գրքի առաջին տպագրութեան իրաւունքը առաջարկվում է ցանկացողներին, որոնք թէ աշխատակրութեան և թէ պայմանների հետ մանրամասն ծանօթանալ կարող են Թիֆլիսում Մուշեղ քահանայ Տէր-Անդրեանցի մօտ: Օտարաքաղաքացիք ուղղակի կարող են դիմել Մոսկու, Учителю Николаю Тер-Гевондянц.

1 (3)

МАГАЗИНЪ С. КАЦА
на Дворцовой улицѣ № 3
Вновь получены большой выборъ разныхъ карманныхъ золотыхъ и серебряныхъ, стѣнныхъ и кабинетныхъ ЧАСОВЪ, новѣйшихъ системъ, изъ лучшихъ ЖЕНЕВСКИХЪ и ПАРИЖСКИХЪ фабрикъ.
За вѣрность хода часовъ магазинъ ручается.
Цѣны умеренныя.
3 (3)